ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ *Մոտիվացիան, որպես ուսուցման կարևորագույն մաս*

ՀԵՏԱԶՈՏՈՂ ՈՒՍՈՒՑԻՉ՝ ՄԱՐԻՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ
Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Նալբանդյանի Պերճուհի և Արմէն Նալպանտեանների անվան միջնակարգ դպրոց

Մենթոր ուսուցիչ՝ Լիլիթ Չալյան

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Ներածություն 3
- Մոտիվացիայի կարևորությունը մանկավարժության մեջ 5
- Ինչպե՞ս բարձրացնել սովորողների ուսման մոտիվացիան.....16
- Եզրակացություն 20
- Օգտագործված գրականության ցանկ 21

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Յուրաքանչյուր սովորող ունի իր մոտիվացիան սովորելու,աշխարհընկալման,աշխարհըմբռնման և աշխարհճանաչման հարցում: Եվ դա լուրջ խնդիր է դարձել,արդիականացելու և հետազոտման մեծ աշխատանք է պահանջում:Սովորողի մոտիվացիան այն է, ինչը դրդում է սովորողին շարժվել այս կամ այն ուղղությամբ: Օրինակ՝ սովորել , զարգացնել,ձեռք բերել,հասնել,նախաձեռնող լինել,կիսվել ուրիշների հետ և այլն: Սովորողների մոտիվացիայի վրա մեծ ազդեցություն են թողնում նաև արտաքին գործոնները, որոնցից են՝ առաջին սերը,ստեղծագործական կիրքը,հասակակիցների կամ ուսուցիչների հետ կոնֆլիկտները և շատ ավելին: Հաճախ հետաքրքրությունը նույնիսկ սիրելի առարկաների նկատմամբ անհետանում է անհայտ պատճառով ՝ պարզապես այն պատճառով , որ դեռահասը չգիտի, թե ինչ է ուզում կյանքից և չունի կոնկրետ նպատակներ:Սովորողների մոտիվացիայի բարձրացման գործում մեծ է ուսուցիչների դերը,որովհետև նրանք պետք է կարողանան սովորողին տալ այնպիսի առաջադրանքներ,որոնք կլինեն հասկանալի և ընդունելի սովորողի կողմից: Ըստ հոգեբանների գիտելիքի յուրացման համար ուսուցիչները պետք է կարողանան բարձրացնել սովորողի ներքին մոտիվացիան,քանի որ այն որոշիչ է կրթական գործընթացում: Ուսուցումը պետք է կազմակերպվի սովորողի հետաքրքության սահմաններում,դրանով ավելացնելով հետաքրքրությունը դեպի դասը:Բարձրացնելով սովորողի ուսուոմնական մոտիվացիան կբարելավվի ուսոմնական գործընթացը:Մոտիվացիայի կայուն մակարդակի առաջացումը նպաստում է երեխային այնպիսի տեսակի կրթական գործունեության մեջ ընդգրկելու հնարավորությանը,որտեղ նա կարող է հասնել հաջողության և միևնույն ժամանակ,որտեղ կա դժվարություններ և խոչընդոտներ հաղթահարելու զգացում: Ուսուցիչը պետք է անընդհատ դրական հուզական մթնոլորտ պահպանի դասարանում, դրա համար անհրաժեշտ է ամրապնդել աշակերտի վստահությունը իրենց ունակությունների նկատմամբ,նվազեցնել սթրեսի բացասական ազդեցությունը թեստերի ժամանակ,բոլոր տեսակի միջամտությունների և հոգնածության ժամանակ.ստեղծել հաջողության իրավիճակ: Ըստ հոգեբանների՝գիտելիքների յուրացման համարուսուցիչը պետք է կարողանա

բարձրացնել սովորողի ներքին մոտիվացիան, քանի որ այն որոշիչ է կրթական գործընթացում:

Հետազոտության նպատակն է ՝ պարզել ուսումնական գործընթացի նպատակային կազմակերպման ազդեցությունը սովորողների հետաքրքրության ավելացման և ուսումնական մոտիվացիայի բարձրացման վրա:Պարզել դպրոցական շարժառիթների պատճառները,դրանցից բխող գործողությունները: Հետազոտության նպատակին հասնելու համար առաջադրել եմ հետևյալ խնդիրները.1.Ուսումնասիրել հիմնախնդրի վերաբերյալ գիտական գրականություն:2. Պարզել տարրական դասարաններում ուսումնական մոտիվացիայի մակարդակը:3.Մշակել մոտիվացիան բարելավելու ռազմավարություն:

Հետազոտական հարց: Արդյոք մոտիվացիան նպաստու՞մ է ուսումնական գործընթացի բարձրացմանը: Ենթադրվում է, որ ուսումնական գործընթացի նպատակային կազմակերպումը հանգեցնում է սովորողի հետաքրքրության ավելացմանը և ուսումնական մոտիվացիայի բարձրացմանը

1.Մոտիվացիայի կարևորությունը մանկավարժության մեջ

Մոտիվացիան առաջացել է լատիներեն movere բառից: Տերմինն առաջին անգամ օգտագործել է Ա. Շոպենհաուերը իր ,Բավարար պատճառի չորս սկզբունքներե հոդվածում: Խոսել անձի գործունեության մոտիվացիայի մասին՝ նշանակում է պարզել,թե որոնք են գործունեության դրդապատճառները,նպատակներն ու դրանց տեսակները: Մարդկային վարքի մոտիվացիայի խնդիրը գիտնականներին միշտ է հետաքրքրել:Հոգեբանության մեջ մոտիվը մարդու արարքների դրդապատճառն է:Ներկայումս մոտիվացիան՝ որպես հոգեկան երևույթ, մեկնաբանվում է մի դեպքում, որպես գործոնների համախումբ, որոնք աջակցում են և առաջնորդում, այսինքն որոշում են վարքագիծը(Կ.Մադսեն,Ժ'.Գոդֆրուա),մեկ այլ դեպքում՝ որպես շարժառիթների համադրություն(Կ.Կ.Պլատոնով,1986),երրորդում՝ որպես ազդակ,որը հանգեցնում է վարքի ակտիվությանը և որոշում է ուղղվածությունը:Որպես մոտիվացիայի միավոր, առանձնացվում է պահանջմունքը(Ա.Ն.Լեոնտև):Ա. Մասլուն իրավացիորեն նշում էր,որ մոտիվացիայի ցանկացած տեսություն պետք է ենթադրի, որ մոտիվացիան շարունակական,անսահման և փոփոխական է,որ այն գրեթե ցանկացած օրգանական վիճակի համընդհանուր բնութագիրն է:Մոտիվացիան գործունեության առաջացման գործընթաց է ,որն իրագործվում է զանազան դրդապատճառների (մոտիվների) առկայության շնորհիվ: Մարդը ձգտում է ձեռք բերել որևէ առարկա,դիրք,վիճակ և այլն: Կարճ ասած՝ նպատակ , որի համար կազմակերպում է որոշակի դրդապատճառների կողմից հարուցվող և անհրաժեշտ ժամանակահատվածում պահպանվող գործունեություն: Այստեղ մեր խնդիրն է ծանոթանալ գործունեություն առաջ բերող հոգեկան ուժերին: Բայց ամենից առաջ պետք է պարզել,թե ինչպիսին է դրդապատճառների և պահանջմունքի հարաբերությունը: Այս հարցի պատասխանն իմանալն անհրաժեշտ է , քանի որ նույնիսկ մասնագիտական գրականության մեջ հաճախ պահանջմունքն ու դրդապատճառը նույնացվում են :

20-րդ դարի երկրորդ կեսին գիտական գրականության մեջ ներքաշվեցին Ջ .'Ռոթերի, Ջ. Կելլիի, Ջ.Ատկինսոնի,Հ. Հեքհաուզենի և այլ հոգեբանների մոտիվացիոն հայեցակարգերը ,որտեղ մարդու վարքը որոշելու գործընթացում որպես առաջատար ընդունվում է գիտակցության դերը:20-րդ դարի սկզբին Ն.Ե. Վեդենսկին ցույց

տվեց,որ ֆիզիոլոգիական հանգստի վիճակը նույնպես ակտիվ վիճակ է:Ի հայտ եկավ մոտիվացիայի հոգեվերլուծական տեսությունը, որտեղ Զ.Ֆրոյդի անգիտակցականի մասին ուսմունքի վրա հիմնված՝ այս հայեցակարգի ներկայացուցիչների կողմից վարքագծի հիմնական շարժառիթներ դիտարկվեցին լիբիդոն և ագրեսիվությունը,ի տարբերություն կոնգրեսիվ մոտեցման,որտեղ մարդու վարքագիծը վերահսկվում էր գիտակցությամբ և գիտակցաբար ձևավորում մոտիվացիան, համաձայն Զ.Ֆրոյդի՝ մոտիվացիայի գործընթացը անգիտակցական էր:Մոտիվացիայի տեսությունների հիմքը պահանջմունքների որոշումն էր և անձի շարժառիթների նույնականացումը, որոնք մարդկանց դրդում են որոշակի գործողությունների:

Ամերիկացի հետազոտող Հ.Մյուրեյը առաջարկում էր մարդկային պահանջմունքների մի դասակարգում, որտեղ կան նաև կրթությունից բխող երկրորդական պահանջմունքներ՝ դրանց թվում առանձնացնելով մոտ երկու տասնյակ պահանջմունքներ՝ հաջողության հասնելու,անկախության, հարգանքի, պաշտպանության, ուշադրության գրավման, ձախաղումից խուսափելու և այլն:

Պահանջմունք, դրդապատճառ, մոտիվացիա

Դրդապատժառները մարդու այն մտքերն են,հույզերը կամ բարդ մտահուզական կազմավորումները, որոնք, ակտիվանալով տվյալ ժամանակահատվածում և որոշակի իրադրության մեջ, մարդուն մղում են որոշակի նպատակի ընտրության,այդ նպատակի ձեռք բերման համար անհրաժեշտ գործողությունների պլանի ստեղծման և նրա իրագործման : Մոտիվածությունը հոգեվիճակ է, որն անհատին ստիպում է օբյեկտների ընտրություն և գործողություններ կատարել: Դրդապատժառը կապող օղակ, կամուրջ է հանդիսանում վարքի ներքին կարգավորիչների ՝ պահանջմունքների և արտաքին միջավայրի միջև: Անհատի պահանջմունքների և դրդապատճառների ուսումնասիրությունը հենց նրա բնույթի , էության կարևոր կողմերից մեկի ուսումնասիրությունն է , այն էության , որը առողջ լինելու դեպքում , կանխորոշում է կենդանի էակի ,բնական իմաստությունը : Վարքը հենց այդ կապն իրագործող երևույթն է: Այն մի կողմից կապված է պահանջմունքների և դրդապատճառների. մյուս կողմից՝ շրջապատող միջավայրի հետ: Եթե մարդու վարքը միշտ միօրինակ է, այսինքն նա միևնույն արտաքին պայմաններին միշտ պատասխանում է նույն հակազդումով,

ապա պետք է եզրակացնել, որ նա ընտրություն կատարելու ներքին հնարավորություն չունի: Միայն դրդապատճառների գոյությունն է ընտրականություն հաղորդում վարքին,մարդուն որևէ ընտրություն կատարելու հնարավորություն է տալիս: Մոտիվացված անձն ընտրում է և պատասխանելու համար հարմար իրադրությունը, և ժամանակը, և ձևը, և պատասխանի մակարդակը : Անհատի վարքի փոփոխականությունը զգալի չափով պայմանավորված է նրա դրդապատճառներով: Յուրաքանչյուր դրդապատճառ իր հիմքում ունի անձի որևէ պահանջմունք և ինչ-որ չափով համապատասխանում է որևէ իրադրության:

Այլ կերպ ասած.դրդապատճառն անձի այս կամ այն պահանջմունքի կամ մի շարք փոխկապակցված պահանջմունքների կոնկրետ մտահուզական դրսևորումն է տվյալ իրադրության մեջ: Օրինակ, մարդն ունի իմացական պահանջմունք,որի կոնկրետ իրադրական դրսևորումներից մեկը հետաքրքրությունն է որոշակի երևույթների նկատմամբ: Հետաքրքրությունը իմացական գործունեության հիմնական դրդապատճառներից մեկն է: Մարդու ցանկացած քիչ թե շատ բարդ գործունեություն ունի մեկից ավելի դրդապատճառներ և հաճախ բավարարում է դարձյալ մեկից ավելի պահանջմունքների: Գործունեության այդ դրդապատճառների խմբի համատեղ աշխատանքը հենց անձի մոտիվացիան է, նրա գործունեության դրդումը, նրան շարժման մեջ դնելու երևույթը: Եթե այդ դրդապատճառները մարդու դրդապատճառները մարդու ակտիվությունն ուղղում են դեպի վերջնական ու գլխավոր մի նպատակ. ապա դրանք զուգամիտվող դրդապատճառներն են : Սակայն որոշակի նպատակաուղղված գործունեություն կատարող մարդու մեջ կարող են լինել նաև նրան այդ հիմնական նպատակից հետ պահող. հեռացնող ուժեր: Նման դեպքերում կարող ենք ասել , որ նրան ակտիվացնող դրդապատճառները հակասական են , կոնֆլիկտային և տարամիտվող: Օրինակ, ուսանողը ցանկանում է պատրաստվել քննության, այդ ցանկությունը բավականին ուժեղ դրդապատճառ է , բայց նրա հոգեկանում առկա է ևս մեկ, բայց այլ ուղղվածություն ունեցող ցանկություն՝ հանդիպել ընկերներին և հաճելի

ժամանակ անցկացնել : Այդ երկու ցանկությունները տարամիտվող դրդապատճառներ են և հանգեցնում են անձի ներքին կոնֆլիկտի:

Դրդապատճառների տեսակները

Որպես մտահուզական կազմավորումներ ,անձի գործունեության դրդապատճառները կարող են դասակարգվել ըստ տարբեր չափանիշների:Ամենից կարևոր դասակարգումը կատարվել է ըստ հոգեկանի տիրույթում դրդապատճառի գոյության մակարդակի: Այդ չափանիշի համաձայն առանձնացնում են գիտակցված և չգիտակցված դրդապատճառներ: Գիտակցված դրդապատճառներն իրենց հերթին տարբեր պահանջմունքների դրսևորումներ հանդիսանալով ընդունում են հետաքրքրությունների,համոզմունքների,ձգտումների ձև: Չգիտակցված կամ ենթագիտակցական դրդապատճառներն են հակումները,դիրքորոշումները, հոգեկանի ենթագիտակցական և հուզականորեն հագեցված բովանդակությունները: Որոշ գիտակցված դրդապատճառներ ժամանակի ընթացքում կարող են անընդունելի դառնալ բարոյական սկզբունքների և իր անձի գիտակցական պատկերացումների տեսանկյունից և արտամղվել դառնալ ենթագիտակցական: Մյուս կողմից,որոշ դրդապատճառներ չեն գիտակցվում անձի կողմից,քանի որ գտնվում են ձևավորման նախնական աստիճանի վրա և կարող են բացահայտվել կամ վարքի նուրբ փոփոխությունների , կամ անմիջական ենթագիտակցական հոգեկան բովանդակությունների օրինակ՝ անուրջների և երազների վերլուծության հիման վրա: Յուրաքանչյուր անձնավորություն գիտակցության մակարդակաում,արտամղված և այլևս չգիտակցվող դրդապատճառների փոխարեն , կարող է ձևավորել նաև նրանց փոխարինող կամ փոխհատուցող դրդապատճառներ,որոնք ինքնապաշտպանական ֆունկցիաներ են կատարում: Օրինակ,չգիտակցելով իր վարքի իրական դրդապատճառները,անձը կանգնած լինելով սեփական վարքը հիմնավորելու կամ արդարացնելու անհրաժեշտության առջև, գիտակցության մակարդակում սկսում է նոր դրդապատճառներ հնարել, պատճառաբանել իր վարքը: Դա ռացիոնալիզացիայի կամ պաշտպանական փաստարկման հոգեբական մեխանիզմի դրսևորումներից մեկն է:

Գիտակցված դրդապատճառներ:

Այսպես են կոչվում անձի ակտիվության այն դրդապատճառները , որոնք նրա կողմից գիտակցվում են, այսինքն նա գիտե, իրեն հստակորեն հաշիվ է տալիս , թե ինչու է կատարում տվյալ գործունեությունը կամ գործողությունը,ինչն է իրեն մղում դեպի ակտիվության այս տեսակ և ինչն է իրեն հետ պահում տվյալ իրադրության մեջ այլ գործողություններ կատարելուց:

Հետաքրքրություններ:

Հետաքրքրությունն անձի իմացական պահանջմունքի կոնկրետ հոգեբանական դրսևորումն է : Հետաքրքրվել ինչ-որ առարկայով,գործունեությամբ ,սոցիալական օբյեկտներով՝ նշանակում է հատուկ,ընտրական և հուզականորեն հագեցված վերաբերմունք հանդես բերել դրանց նկատմամբ: Եթե որևէ առարկա հետաքրքրում է մեզ,ապա ցանկանում ենք հետզաոտել այն, ավելի շատ տեղեկություններ ստանալ նրա մասին, բավարարել մեր իմացական պահանջմունքը: Սակայն իմացական պահանջմունքի առկայությունը հետաքրքրության առաջացման միակ պատճառը չէ, առարկան մեզ կարող է հետաքրքրել այն պատճառով , որ մենք ունենք այլ պահանջմունքներ, որոնք կարող են բավարարվել տվյալ առարկայի միջոցով: Այնպես որ, որևէ առարկա ձեռք բերելով նրա նկատմամբ հետաքրքրություն դրսևորելով մենք կարող ենք միաժամանակ բավարարել մի շարք պահանջմունքներ:Օրիանակ , իր աշխատանքային գործունեության նկատմամբ հետաքրքրության ունեցող մարդը այդ գործունեությունը կատարելու միջոցով կարող է բավարարել այնպիսի պահանջմունքներ, ինչպես ինքնահաստատաման հասնելու, իր ներքին հնարավորությունները բացահայտելու և ընդունակությունները զարգացնելու , վարպետության հասնելու , սոցիալական կապերի մեջ մտնելու իր և իր ընտանիքի նյութական կարիքները բավարարելու և այլ պահանջմունքներ:

Ահա թե ինչու ամեն մի հետաքրքրություն , հատկապես եթե ուղղված է դեպի սոցիալական բարդ մի շարք դրդիչների կենտրոնացված դրսևորումն է հոգեբանական մակարդակում: Պետք է նշել , որ հետաքրքրությունները զարգացող անձին պատրաստ վիճակում չեն տրվում, անձի հոգեկանում դրանք զարգանում , ձևավորվում են : Զարգացման նախնական փուլում անձը կարող է չգիտակցել, թե ինչ պահանջմունքներ են ընկած իր այս կամ այն հետաքրքրության հիմքում, առավել ևս երբ այդ պահանջմունքները բնածին են և վերաբերում են հոգեկանի ժառանգական անգիտակցական ոլորտին: Օրիանկ , 3-5 տ. երեխան հատուկ հետաքրքրություն է հանդես բերում գույների և դրանց զուգորդությունների նկատմամբ,մեծահասակներին բազմաթիվ հարցեր է տալիս և ընկալման համար մատչելի և՛ միայն խոսքով նկարագրված ,և՛ այժմ բացակայող առարկաների գույների մասին: Միանգամայն հնարավոր է , որ այդ հետաքրքրության հիմքում ընկած են էյդետիզմը և

գեղարվեստական օժտվածության այլ նախադրյալներ, գեղագիտական պահանջմունքի սաղմեր: Իր մեջ այդ ամենի գոյության մասին փոքրիկը չի կարող իմանալ, դրանք անգիտակցական հոգեկան երևույթներ են, որոնք զուգամիտվելով հանգեցնում են գույների նկատմամբ հետաքրքրության.այսինքն ինչ-որ չափով գիտակցվող դրդապատճառների ձևավորման:Այդ պատճառն իր հերթին հանգեցնում է վարքի որոշակի ձևերի հարցեր տալու , գունավոր առարկաներ հավաքելու,դրանց զննման ու դասակարգման և այլն: Ինչպես տեսնում ենք, հետաքրքրության ձևավորման ընթացքը մեծ մասամբ ենթագիտակցական է: Կյանքի ընթացքում մարդը ձեռք է բերում նորանոր հետաքրքրություններ, իսկ նախկին հետաքրքրությունների մի մասը կարող է անհետանալ: Բանն այն է , որ մի շարք հետաքրքրություններ առաջանում են համամարդկային գծերի և պահանջմունքների հիման վրա, մյուսները կախված են տարիքային փուլերի առանձնահատկություններից: Կան հետաքրքրություններ ,որոնք պայմանավորված են այն հանգամանքով ,թե տվյալ անձն ինչ սոցիալական խմբերի անդամ է և ինչպիսի ազդեցությունների է ենթարկվում: Վերջապես որոշ հետաքրքություններ ծնվում են անձի կառուցվածքի մեջ մտնող խառվածքի բնավորության և սոցիալական դիրքորոշումների կայուն առանձնահատկությունների հիման վրա: Այս բոլոր հանգամանքները հանգեցնում են մարդու հետաքրքրությունների բազմազանության :Դրանց շարքում կարելի է առանձնացնել մի շարք տեսակներ: Հետաքրքրությունները լինում են նյութական,հասարակական, հոգևոր և հոգեբանական: Նյութական հետաքրքրությունների առարկաները այնպիսի նյութական արժեքներ են , ինչպես սննդի տեսակները,հագուստը , բնակարանը, կահույքը, փոխադրամիջոցները և այլն: Երբ նյութական հետաքրքրությունը դուրս է գալիս պատշաճ սահմաններից,դառնում է նյութապաշտություն: Նյութապաշտ անձը ձեռք է բերում սպառողի հոգեբանական գծեր, նրա հոգևոր և սոցիալական ակտիվությունը սահմանափակվում է : Եթե նորմալ զարգացած անձի կյանքում նյութական օբյեկտները լոկ պայմաններ են գործունեության բարձր տեսակներով զբաղվելու համար, ապա նյութապաշտ քաղքենու կյանքում դրանք դառնում են հիմնական և ինքնուրույն նպատակներ, ինքնահաստատման միջոցներ:

Հասարակական հետաքրքրությունները դրսևորվում են սոցիալական խմբերում կազմակերպչական գործունեություն կատարելու նկատմամբ հատուկ հակվածության

ձևով:Նման անձինք, իրագործելով այդ հետաքրքրությունը,արագորեն սոցիալական հմտություններ են ձեռք բերում, մարդկանց հետ կապեր հաստատելու և նրանց վրա ազդելու որևէ գործունեության մղելու այսինքն մարդկանց կառավարելու ընդունակություններ:

Հոգևոր հետաքրքրություններ են անձի զուտ իմացական հետաքրքրությունները բնության տարբեր երևույթների, գիտելիքների տարբեր բնագավառների նկատմամբ: Ընդ որում տարբեր անձինք կարող են հետաքրքրվել հոգևոր մշակույթի տարբեր ոլորտներով՝ երաժշտությամբ,նկարչությամբ ,գիտության այս կամ այն բնագավառով, գեղավերստական գրականությամբ և այլն: Կյանքի ընթացքում մարդկանց հոգևոր հետաքրքրությունների առարկաներն ու շրջանակները կարող են փոփոխվել ու հերթափոխվել:

Կայուն կոչվում են այն հետաքրքրությունները, որոնք մեկ անգամ ձևավորվելով , երկար տարիներ կամ նույնիսկ ողջ կյանյքի ընթացքում, այլևս չեն վերանում: Դրանք կարող են խորանալ ու ընդլայնվել,բայց ըստ իրենց առարկաների հիմնականում մնում են նույնը: Օրինակ,մաթեմատիկական հետաքրքրությունները շաատերի մեջ սկսում են ձևավորվել շատ վաղ, հըաճախ նախադպրոցական տարիքում և աստիճանաբար ավելի ու ավելի են խորանում ու կայունանում : Նման բնույթ ունեին այնպիսի ականավոր մասնագետների մաթեմատիկական հետաքրքրությունները ինչպիսիք էին Կ.Գաուսը, Ա.Պուանկարեն.որոնց մասին հիշատակել ենք ընդունակություններեփրին նվիրված գլխում ժամանակակից շատ մաթեմատիկոսներ: Անկայուն հետաքրքրությունները կարճաժամկետ են անցողիկ ու մակերեսային: Օրինակ, որևէ մեկը իմանալով որ իսպաներենով գրվել են բարձրարժեք գեղարվեստական գործեր,կարող է հետաքրքրվել այդ լեզվով , դասագրքեր ու բառարաններ գնել և սկսել ուսումնասիրել այն, բայց կարճ ժամանակ անց դժվարությունների հանդիպելով թողնել այդ զբաղմունքը: Դժվարությունների հանդիպելու գուցե նաև լեզվական ընդունակությունների թուլության հետևանքով հետաքրքրությունը ևս թուլանում է ու անհետանում: Կայուն հետաքրքրությունները սովորաբար նաև խորն են լինում անձը ձգտեւմ է որքան հնարավոր է շատ մանրամասնություններ իմանալ իրեն հետաքրքրող երևույթի մասին, պարզել նրա պատճառական պայմնավորվածությունն ու ծագումը կապն այլ երևույթներիհետ: Անկայուն հետաքրքրությունները միաժամանակ նաև մակերեսային

են: Հետաքրքրությունները լինում են նաև լայն ու նեղ այսինքն տարբերվում են ըստ ընդգրկման ծավալի: Լայն հետաքրքրություններն իրենց հերթին կարող են լինել խորը կամ մակերեսային : Նույնը վերաբերում է նաև նեղ հետաքրքրության առարկայի մեջ մտքով խորանալու ավելի մեծ հնարավորություններ: Ահա թե ինչու մեզ հետաքրքող երևույթներն ավելի խորն ուսուննասիրելու համար պետք է ժամանակավորապես սահմանափակենք հետաքրքրությունների ոլորտը,մանրազնին հետազոտության ենթարկենք որոշակի առարկաներ և հետո միայն անցնենք մեզ համար հետաքրքրության ներկայացնող այլ առարկաների ուսումնասիրության: Սա խելամիտ ինքնասահմանափակման սկզբունքն է, որը հետևողականորեն կիրառելու դեպքում կարող է շատ մեծ օգուտ տալ անձի իմացական զարգացմանը: Լայն հետաքրքրությունները կարող են լինել բազմազան , բայց կարող են տեղորոշվել նաև որոշակի ,նեղ բնագավառներում: Օրինակ լայն զարգացում ունեցող անձը կարող է հետաքրքրվել և հարուստ գիտելիքներ ձեռք բերել գիտության, գրականության և արվեստի մի շարք բնագավառների վերաբերյալ : Բայց երբ մենք խոսում ենք, օրինակ որևէ ֆիզիկոսի հետաքրքրությունների ծավալի մասին, ապա դրանք կարող են բնութագրվել որպես լայն եթե նա լրջորեն զբաղվում է այդ գիտության մի շարք բնագավառներով: Ժամանակակից ֆիզիկան այնքան լայն է, որ շատ ֆիզիկոսներ նրա շրջանակներում ընտրում են գործունեության ավելի նեղ ոլորտներ ,ամբողջ կյանքը նվիրելով դրանց խոր ուսումնասիրությանը: Նույնը վերաբերում է գիտության մյուս բնագավառներին: Բայց շատ նեղ հետաքրքրությունները վնասակար են մարդու և իմացական, և անձնային հատկանիշների զարգացման համար: Այս կապակցությամբ տեղին է հիշատակել Չ.Դարվինի հետևյալ խորհրդածությունը, որ նա արել է իր կյանքի վերջին շրջանում: Նա սփոփանք է հայտնում , որ ակտիվ գիտական աշխատանքով զբաղվելու հետևանքով զգալի չափով կորցրել է իր գեղագիտական ճաշակը՝Կարծում եմ , որ իմ խելքից բարձր կազմակերպված կամ ավելի լավ կառուցված խելք ունեցող մարդուն այդպիսի փորձանք չէր պատահի, ես ինձ համար կանոն կսահմանեի գոնե շաբաթը մեկ անգամ կարդալ որոշ քանակությամբ ոտանավորներ և լսել որոշ քանակությամբ երաժշտություն...Այդ ճաշակների կորուստը հավասարազոր է երջանկության կորստին և վնասակար կերպով է անդրադառնում մտավոր ընդունակությունների վրա, որովհետև թուլացնում է մեր բնույթի հուզական կողմը:

Մարդու յուրաքանչյուր հետաքրքրություն ինչ-որ չափով ակտիվացնում է նրան: Բայց ըստ ակտիվացման աստիճանի կարելի է առանձնացնել հետաքրքրությունների առնվազն երկու տեսակ պասիվ և ակտիվ հետաքրքրություններ: Եթե իր հետաքրքրության ազդեցության տակ անձը լոկ դիտում, թեթևակիորեն ծանոթանում է որոշակի երևույթների ,ապա պայմանականորեն նման հետաքրքրությունը կարող ենք անվանել ,պասիվ. այսինքն՝ անգործունյա: Իսկ երբ հետաքրքրությունն այնպիսին է , որ անձին մղում է արդյունավետ ակտիվության , ապա նման հետաքրքրությունը կարելի է բնութագրել որպես ակտիվ,գործունյա: Ընդհանուր առմամբ անձի դրդապատճառների ակտիվացնող հնարավորությունները կարող են տարբեր մակարդակներ ունենալ: Նույնանուն հետաքրքրությունը մեկ անձի մեջ կարող է լինել ակտիվ, իսկ մյուսի մեջ պասիվ: Ըստ այդմ էլ դրանք կանխորոշվում են իմացական և այլ տեսակի տարբեր արդյունքներ:

1.2 Մոտիվացիան մանկավարժության մաս:

Ուսումնական մոտիվացիան ուղղորդում և աջակցում է ուսումնական գործունեության իրականացմանը: Սա իրենից ներկայացնում է ուսումնական գործունեության իրականացմանը: Սա իրենից ներկայացնում է մի բարդ , համապարփակ համակարգ, որը ձևավորում է շարճառիթների, նպատակների անհաջողության արձագանքների,հաստատակամության և սովորողների տեղորոշման համար: Մոտիվները ձևավորում են սովորողի բնավորության առանձնահատկություններով: Սովորողնի ուսումնական մոտիվացիան կարող է տարբեր լինել,կախված նրանց տարիքից և նույնիսկ տրամադրությունից: Դրա համար էլ գոյություն ունի մոտիվացիայի երեք մակարդակ՝ բարձր, միջին և ցածր:

Մոտիվացիայի մակարդակները		
բարձր՝ երբ սովորողը ցանկություն ունի դպրոց գնալ, սովորել նոր բան, սիրում է շփվել դասընկերների, ուսուցչի հետ, սիրում է իր կարգավիճակը	միջին՝ երբ սովորողին գրավում է ոչ թե ուսումնական գործընթացը, այլ ուսուցչի , և դասընկերների հետ շփվելու ցանկությունը	ցածր՝ երբ սովորողը դպրոց գնալու ցանկություն չունի և հետաքրքրում ուսումնական գործընթացը

Այսպիսով, անձի որոշակի գործունեությամբ պայմանավորված՝որի գործունեության հիմքում ընկած են մի քանի շարժառիթներ, պահանջմունքներ,կարիքներ ուղղորդում են անձի վարքը: Վերը թվարկվածներից զատ՝ գոյություն ունեն մոտիվացիայի վերաբերյալ շատ ուրիշ այլ աշխատություններ, տեսություններ, հայեցակարգ,որոնք անդրադարձել են անձի մոտիվացիոն ոլորտի առանձնահատկություններին ինչպես աշխատանքային, այնպես էլ ուսումնական գործունեության մեջ: Կախված գործունեության ոլորտից,բնությունից,անձի մոտիվացիան կարող է տարբեր լինել,քանի որ գործունեության տարբեր ոլորտներին համապատասխան գոյություն ունեն մոտիվացիայի տարբեր տեսակներ,որոնք ուղղորդում են անձին՝ կատարելու այս կամ այն ուղղվածության գործունեությունը :

Դրական կրթական ուսումնական մոտիվացիա ստեղծելու ,զարգացնելու հարցնում մեծ է ուսումնական հաստատության գործունեության դերը, ուսուցիչի կիրառած մանկավարժական մեթոդները և հմտությունները,ուսուցչի արտահայտիչ խոսքը, դասարանում տիրող առողջ մթնոլորտը, ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերությունները և այլն: Կրթական մոտիվացիան և դպրոցի նկատմամբ կայուն դրական վերաբերմունքը մեծացնելու և պահպանելու համար կարևորվում է ուսուցիչների և ծնողների դերը, որոնք պետք է հաշվի առնեն այն բաղադրիչները , որոնցից մեծապես կախված է կրթական մոտիվացիան:



Հաջող ուսուցումն առանց մոտիվացիայի անհնար է, որովհետև ուսումնասիրելով այս թեման բացահայտեցի, որ հետաքրքրասերների համար հաջող ուսումնառությունն ավելի բարձր է քան ինտելեկտով սովորողի: Փոխհատուցող գործոնի դերը ոչբավարար բարձր ունակությունների դեպքում սովորողը կարող է բարձր դրական մոտիվացիա ունենալ, սակայն այդ սկզբունքը հակառակ ուղղությամբ չի աշխատում աշակերտի ոչ մի ընդունակություն չի կարող փոխարինել ուսումնական դրդապատճառի բացակայությանը և ուսման մեջ զգալի հաջողություններ ապահովել:Մոտիվացիայի վրա ազդող պատճառներ կան՝ սովորելու ցանկություն չունենալը ,դպրոցում վատ վերաբերվելը:Դրա համար դպրոցում այնպիսի պայմաններ պետք է ստեղծվեն, որ սովորողը հաճույքով հաճախի դպրոց և սեր ու հետաքրքրություն առաջանա նրա մոտ ուսուցման գործընթացի նկատմամբ:Իսկ այդ ամենի կապողն ու սերմանողը պետք է լինի ուսուցիչը:Նման դասընթացները պահանջում են ավելի մեծ պատրաստվածություն: Այսպիսով,բավարար չէ միայն բովանդակության մատչելի հասանելի ներկայացումը,անհրաժեշտ է , որ ուսուցիչը կիրառի մեթոդներ, որոնց շնորհիվ աշակերտը կդառնա դասապրոցեսի անմիջական մասնակիցը:

ԻՆՉՊԵ՞Ս ԲԱՐՁՐԱՑՆԵԼ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՈՒՍՄԱՆ ՄՈՏԻՎԱՑԻԱՆ

Դպրոցական մոտիվացիան ներքին գործընթաց է, որով սովորողները անկախ ցանկություն են ունենում սովորել, բարելավել իրենց գնահատականները, ընդլայնեն իրենց գիտելիքները և, ընդհանուր առմամբ, կրթական համատեքստին առնչվող նպատակներ դնել: Սա ակադեմիական լավ արդյունքների հասնելու կարևորագույն գործոններից մեկն է: Արտաքին մոտիվացիայի պարագայում նախատեսվում է ստանալ որոշակի մրցանակ կամ գուցե ինչ-որ բանից խուսափել: Օրինակ՝ երբ երեխան տնային առաջադրանք է կատարում, որպեսզի ուսուցիչները նրան ավելի բարձր գնահատական նշանակեն կամ պարգևատրեն: Ներքին մոտիվացիայի դեպքում չկա մրցակցություն, սովորողը վարձատրություն չի ակնկալում, դա անում է իր շահերի համար, երբեմն՝ անձնական կատարելագործման համար: Հենց այդ դրդրապատճառն է բավականություն պատճառում սովորողին: Ուսումնական մոտիվացիայի բացակայությունը կարող է բացասական ազդեցություն ունենալ սովորողների արդյունքների, ինչպես նաև նրանց հուզական վիճակի վրա: ՈՒստի անհրաժեշտ է ինչ-որ կերպ բարելավել այս գործոնը: Մոտիվացիայի բացակայության դեպքում առաջանում են մի շարք խնդիրներ. օրինակ՝ ընկալման դժվարություններ, կրթության ցածր արդյունքներ, կենտրոնանալու դժվարություն (արդյունքում չի ստանա իրեն անհրաժեշտ գիտելիքները), դասարանում անպատշաճ պահվածք, ըմբոստ վարք, ցածր ինքնագնահատական, ընկճվածություն և կյանքի նկատմամբ վերահսկողության բացակայության զգացում:

Ուսման մեջ հստակ և կարճաժամկետ նպատակների առկայությունը կարող է նպաստել արտաքին մոտիվացիայի բարձրացմանը, ինչը կարող է որոշակիորեն մեղմել ներքին մոտիվացիայի բացակայության հետևանքները: Խորհուրդ է տրվում, որ ուսուցիչը հստակ ներկայացնի, թե յուրաքանչյուր պահին ինչի է փորձում հասնել, որպեսզի սովորողները զգան իրենց նկատմամբ առկա վերահսկողությունը: Պետք է նաև ուսման բովանդակությունը կապել առօրյա կյանքի, մտահոգությունների հետ: Սա դրական ազդեցություն կունենա դպրոցական մոտիվացիայի վրա:

Ներքին և արտաքին ճիշտ մոտիվացիան թույլ է տալիս մարդուն լիովին գիտակցել իր բնական կարողությունները և հասնել իր նպատակներին: Ներքին մոտիվացիան (երբ այս կամ այն գործողության շարժառիթը մտքերն են, հույզերն ու զգացմունքները) միշտ

կապված է հաճույքի հետ: Այս դեպքում արդյունքն ինքնին արդեն վարձատրություն է: Այս տեսակի մոտիվացիայով անհատը.

ա) հեշտությամբ պահպանում է կենտրոնացվածության բարձր մակարդակը հանձնարարված առաջադրանքը կատարելիս, ինչը վերացնում է պատահական սխալների վտանգը:

բ) կատարում է հանձնարարված առաջադրանքները հնարավորինս հստակ և արդյունավետ՝ առանց ավելորդ սպառիչ գերլարման:

Ներքին մոտիվացիան բարձրացնելու համար մարդը պետք է համոզի իրեն, որ սիրում է կատարել այն աշխատանքը, որը իրեն հանձնարարված է: Այսինքն՝ պետք է աշխատանքը վերածել հոբբիի: Հիանալի օրինակ կա ,Ես և շրջակա աշխարհը 3-րդ դասարանի համար նախատեսված դասագրքում (Լուսինե Ալեքսանյան, Նունե Թորոսյան, 2022թ.). թեմա՝ ,Աշխատանք և ժամանց (էջ 27-29), ըստ Մարկ Տվենի ,Թոմ Սոյի արկածներըե վիպակի. ,Թոմը հանկարծ հասկացավ մի շատ պարզ բան՝ որպեսզի մի բան ուզենաս անել, պետք է այդ բանը քեզ դժվարությամբ տրվի: **Գործն** այն է, ինչը պարտավոր ենք անել, իսկ **խաղը՝** այն, ինչը պարտավոր չենք անել: Դրա համար էլ ջրհորից ջուր կրելը ծանր աշխատանք է, իսկ քարքարոտ ժայռեր մագլցելը՝ բավականություն: Պատահում է, որ մարդիկ պատրաստ են վճարել, միայն թե իրենց թույլ տան ինչ-որ գործ կատարել, որը երբեք չէին անի, եթե իրենց դրա համար աշխատավարձ չտային:

Առավել օպտիմալ է, երբ ներքին և արտաքին մոտիվացիաները հավասարակշռված են. այս դեպքում հաջողակ դառնալու հավանականությունը մեծանում է: Արտաքին մոտիվացիան (Այն առաջանում է, երբ արտաքին հանգամանքները դրդրում են մարդուն որոշակի գործողությունների: Եթե դրանք բացառենք, ապա ակտիվությունը կարող է զրոյի հասնել): Փոփոխական է, որը կապված է շրջապատող աշխարհի պայմանների փոփոխության հետ: Մշտական ներքին մոտիվացիայով հուսահատությունը բնորոշ չէ մարդուն, հետևաբար նա միշտ ելքեր է գտնում կյանքի ամենադժվար իրավիճակներից:

Կատարածս հետազոտությունները II դասարանում, ցույց են տվել, որ ուսուցչի անհատականությունը, նրա հմտությունը, առարկայի նկատմամբ հետաքրքրության առաջացումը մեծ ազդեցություն են ունենում սովորողների ուսումնական մոտիվացիայի վրա: Դրական կրթական ուսումնական մոտիվացիա ստեղծելու և զարգացնելու հարցում մեծ է ուսումնական հաստատության գործունեության դերը, ուսուցչի կիրառած մանկավարժական մեթոդները և հմտությունները, ուսուցչի արտահայտիչ խոսքը, դասարանում տիրող առողջ մթնոլորտը և այլն: Կարելի է ասել, որ երեխայի ուսումնական գործունեությունը խթանում է ոչ թե մեկ դրդապատճառով, այլ միահյուսված, միմյանց փոխլրացնող զանազան շարժառիթների մի ամբողջ համակարգ: Այդ նպատակով առաջարկում եմ սովորողների ուսման մոտիվացիան բարելավելու (բարձրացնելու) հետևյալ ռազմավարությունը.

1. Խրախուսել սովորողներին, երբ նրանք դրական վարք են դրսևորում:
2. Տալ մրցանակներ կարճաժամկետ նպատակների իրականացման համար (գովասանագիր, շնորհակալագիր,...):
3. Ապահովել բոլորի ներգրավվածությունը դասին:
4. Օգտագործել խմբային աշխատանքը որպես միջոց բոլորի համար հավասար համագործակցելու համար:
5. Դրականորեն գնահատել խմբերի անդամների փոխհարաբերությունները՝ ամրապնդելով նրանց լավ աշխատանքը:
6. Վերլուծել հաջողությունների և հնարավոր անհաջողությունների պատճառները:
7. Ուսուցումը հարմարացնել բոլոր մակարդակներին՝ չանտեսելով ցածր մակարդակը, քանի որ հենց նրանք են պահանջում ավելի մեծ ուշադրություն և բարձր մոտիվացիա:
8. Ընտրության մասնակի ազատության ապահովում, տալ ինքնավարություն, ինքնուրույն որոշում կայացնելու հնարավորություն:

9. Օգտագործել երկխոսությունը որպես հիմնական գործիք շարժառիթները և ինքնագնահատականը բարձրացնելու համար:

10. Դասավանդելիս անհրաժեշտ է հաշվի առնել երեխաների կարիքները, հետաքրքրությունները, ձգտումները:

11. Հետաքրքրությունն ու ուրախությունը պետք է սովորողի համար լինեն հիմնական փորձառությունները ուսումնական գործընթացում:

12. Նյութի մատուցման անսովոր ձև. փոխել դասավանդման մեթոդներն ու տեխնիկան: Կիրառել նոր տեղեկատվական տեխնոլոգիաներ:

13. Ոչ միայն ուսուցանել, այլև զարգացնել երեխայի մտածողությունը առարկայի միջոցով:

14. Հնարավորության դեպքում փորձել ինտեգրել գիտելիքները՝ մի առարկայի թեմաները կապելով ինչպես հարակից, այնպես էլ ակադեմիական առարկաների հետ՝ հարստացնելով գիտելիքները:

15. Խաղը հզոր խթանիչ գործոն է:

16. Հաջողության իրավիճակի ստեղծում՝ բոլոր սովորողների համար իրագործելի առաջադրանքների իրականացման, հին գիտելիքների վրա հիմնված նոր նյութի ուսումնասիրության միջոցով:

17. Գործունեության խթանում՝ գնահատման, բանավոր խրախուսման, լավագույն աշխատանքների ցուցադրություն, ուսուցչի կողմից աննշան օգնության ցուցաբերման, առաջդրանքների բարդացման միջոցով:

18. Կրթական գործընթացի նկատմամբ երեխաների հետաքրքրությունը մեծացնելու համար շատ կարևոր է երեխայի հետ շփումը և վստահության մթնոլորտը:

19. Հարգել յուրաքանչյուր երեխայի անհատականությունը:

Դասասենյակի նպատակային կահավորում, դիդակտիկ պարագաների (նաև ինքնաշեն) առկայություն:



ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, ուսումնասիրությունները ցույց են տվել, որ սովորողների շրջանում սոցիալական լայն շարժառիթները սովորելու և կրթական հետաքրքրությունների համար այլ բնույթ են ստանում: Սոցիալական լայն շարժառիթներից առաջատարը դառնում է սովորողների ցանկությունը՝ գտնել իրենց տեղը դասարանում ընկերների շրջանում: Պարզվել է, որ սովորողների մոտ լավ սովորելու ցանկությունն ամենից շատ պայմանավորված է նրանց ընկերների պահանջների մակարդակում լինելու,նրանց հեղինակությունը իրենց գործունեության որակով նվաճելու ցանկությամբ: Միևնույն ժամանակ այս տարիքի սովորողների շրջանում անկարգապահ վարքագծի,ուրշների նկատմամբ թշնամական վերաբերմունքի,նրանց մոտ բնավորության բացասական գծերի ի հայտ գալու ամենատարածված պատճառը ուսումնառության ձախողումն է : Ուսումնական գործընթացը բովանդակային առումով,նյութի մատուցման ձևով պետք է լինի ճկուն և հետապնդի ուսուցման հիմնական խնդիրներից մեկը՝ սովորողների գիտելիքների յուրացումը դարձնել տևական ,բովանդակալից,իսկ բուն ուսումնառությունը՝ ցանկալի,ուրախություն պատճառող:Մոտիվացիայի կայուն մակարդակի առաջացումը նպաստում է երեխայի այնպիսի տեսակի կրթական գործունեության մեջ ընդգրկելու հնարավորությանը, որտեղ նա կարող է հասնել հաջողության և միևնույն ժամանակ, որտեղ կա դժվարություններ և խոչընդոտներ հաղթահարելու զգացում: Ուսուցիչը պետք է անընդհատ դրական հուզական մթնոլորտ պահպանի դասարանում : Դրա համար անհրաժեշտ է ամրապնդել աշակերտի վստահությունը իրենց ունակությունների նկատմամբ ,նվազեցնել սթրեսի բացասական ազդեցությունը թեստերի ժամանակ, բոլոր տեսակի միջամտությունների և հոգնածության ժամանակ ստեղծել հաջողության իրավիճակ , որը հնարավոր է ուսուցչի և աշակերտի համագործակության և փոխադարձ հարգանքի շնորհիվ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.Ա.Նալչաջյան. Ընդհանուր հոգեբանության հիմունքներ, Երևան, 1991:

2.Ջ.Ե. Թունյան , Լ.Մ.Երիցյան.Կրտսեր դպրոցականի հոգեբանություն, Երևան, 2013:

3.Վ.Ս.Կարապետյան, Ս.Ռ.Գևորգյան, Ա.Ս.Բերբերյան, Ռ.Հ.Պետրոսյան, Հ.Վ.Խաչատրյան.Կրթուրյան հոգեբանության դասախոսությունների ժողովածու, Երևան, 2016:

4. Ն.Հակոբյան, Ս.Գևորգյան ,Ա.Հովհաննիսյան, Ա. Դավթյան. Մանկավարժական հաղորդակցում, Երևան, 2010:

5.Հայաստանի շախմատի ակադեմիա. Շախմատի դասավանդման հոգեբանական ձեռնարկ, Երևան,

6.Зоткин Н. В. Серебрякова М. Е. Общая психология. Психология мотивации и эмоций, Россия, 2007:

7.https://umc-pedagog.ru/media/1529067747_-PSIHOLOGIYa.pdf